



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆՆԹԵՂ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՈՒՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLEIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MOTRÉAL

ՄԱՅՐ ՏԼԵՃԱՐ

ԿԻՐԱԿԻ, 24 Մայիս 2020

164

DIMANCHE, 24 Mai 2020



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ
2ÈME RAMEAUX

Աստուածաշունչի Ընթերցումներ

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

23.12-35

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՍԱԿԷՆ

5.13-21

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

12.12-23

Les lectures de la Bible d'aujourd'hui :

1 JEAN 5.13-21

JEAN 12.12-23

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԳԷՈՐԳ ՔՀՆՅ. ԱԲԵԱՆ

Célébrant:

RÉV. PÈRE GEVORG APYAN

Առաւօտեան Ժամերգութիւն Ժամը-

Office Matines à

9:30-ին

9h30

Ս. Պատարագ- ուղիղ սփռում Ժամը-

La Sainte Messe – En direct à

10:30-ին

10h30

Հոգեհանգիստ - ուղիղ սփռում Ժամը-

Office de Requieme – En direct à

12:30-ին

12h30

Organist : Vahram Sargsyan

Cœur : Emma et Zara Sargsyan

ԿՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ 1- ԻՆ ՆԱՄԱԿԷՆ 5.13-21

Այս բաները գրեցի ձեզի՝ որպէս զի գիտնաք թէ յաւիտենական կեանք ունիք դուք՝ որ Աստուծոյ Որդիին անունին կը հաւատաք: Մենք համարձակութիւնը ունինք անոր քով, քանզի գիտենք թէ ինչ որ խնդրելու ըլլանք իր կամքին համեմատ, պիտի լսէ մեզի: Եւ եթէ գիտնանք թէ պիտի լսէ ինչ որ խնդրելու ըլլանք, ուրեմն կը գիտնանք թէ պիտի առնենք ինչ որ խնդրենք իրմէ:

Եթէ մէկը տեսնէ որ իր եղբայրը ո՛չ մահացու մեղք մը գործեց, թող խնդրէ ու Աստուած կեանք պիտի տայ այն մահացու չեղած մեղքը գործողին: Մեղք կայ որ մահացու է, չեմ ըսեր թէ անոր համար խնդրէ: Ամէն անիրաւութիւն մեղք է, բայց մեղք կայ որ մահացու չէ:

Գիտենք թէ ան, որ Աստուծմէ ծնած է՝ մեղք չի գործեր: Ա՛ն որ Աստուծմէ ծնած է՝ իր անձը կը պահէ ու չարը անոր չի դպչիր: Գիտենք թէ մենք Աստուծմէ ենք ու բոլոր աշխարհ չարին մէջ է: Գիտենք թէ Աստուծոյ Որդին եկաւ ու մեզի կարողութիւն տուաւ որպէս զի ճշմարիտը ճանչնանք: Մենք այն ճշմարիտին մէջ ենք, իր Որդիին Յիսուս Քրիստոսին մէջ: Անիկա է ճշմարիտ Աստուածն ու յաւիտենական կեանքը: Ո՛րդեակներ, ինքզինքնիդ կուռքերէն պահեցէք:

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 12.12-23

Հետեւեալ օրը շատ ժողովուրդ, որ տօնին եկած էին, երբ լսեցին թէ Յիսուս Երուսաղէմ կու գայ, Արմաւենիի ոստեր առին ու ելան զանիկա դիմաւորելու եւ կ'աղաղակէին. «Ովսա՛ննա, օրհնեալ է Իսրայէլի թագաւորը՝ որ Տէրոջը անունովը կու գայ»: Յիսուս աւանակ մը գտնելով՝ անոր վրայ նստաւ, ինչպէս գրուած է. «Մի՛ վախնար, ո՛վ Միօնի

աղջիկ, ահա քու Թագաւորդ կու գայ իշու աւանակի վրայ նստած»: Անոր աշակերտները առաջ չիմացան այն բաները, բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ, այն աստեն մտքերնին բերին թէ այս բաները անոր համար գրուած էին եւ թէ իրենք այս բաները ըրին անոր: Իրեն հետ եղող ժողովուրդը կը վկայէր թէ ա՛ն Ղազարոսը գերեզմանէն դուրս կանչեց ու մեռելներէն յարուցանեց զանիկա: Ասոր համար ալ ժողովուրդը զանիկա դիմաւորեց, վասն զի լսեցին թէ անիկա այս հրաշքը ըրած էր: Իսկ փարիսեցիները իրարու կ'ըսէին. «Կը տեսնէ՞ք որ օգուտ մը չենք կրնար ընել. ահա բոլոր աշխարհ անոր ետեւէն գնաց»:

Քանի մը Յոյներ կային տօնին երկրպագութիւն ընելու ելլողներուն մէջ: Ասոնք Փիլիպպոսին եկան, որ Գալիլիայի Բեթսայիդայէն էր եւ կ'աղաչէին անոր ու կ'ըսէին. «Տէ՛ր, կ'ուզենք Յիսուսը տեսնել»: Փիլիպպոս եկաւ ու Անդրէասին ըսաւ եւ յետոյ Անդրէաս ու Փիլիպպոս մէկտեղ Յիսուսին ըսին: Յիսուս ալ պատասխան տուաւ անոնց ու ըսաւ. «Ժամանակը հասաւ, որ փառաւորուի Որդին մարդոյ:

1 JEAN 5.13-21

Je vous ai écrit ces choses, à vous qui croyez au Nom du Fils de Dieu, afin que vous sachiez que vous avez la vie éternelle, et afin que vous croyiez au Nom du Fils de Dieu. Et c'est ici la confiance que nous avons en Dieu, que si nous demandons quelque chose selon sa volonté, il nous exauce. Et si nous savons qu'il nous exauce, en quoi que nous demandions, nous le savons parce que nous obtenons les choses que nous lui avons demandées.

Si quelqu'un voit son frère pécher d'un péché qui n'est point à la mort, il priera [pour lui], et [Dieu] lui donnera la vie; savoir à ceux qui ne pêchent point à la mort. Il y a un péché à la mort; je ne te dis point de prier pour ce péché-là. Toute iniquité est un péché; mais il y a quelque péché qui n'est point à la mort.

Nous savons que quiconque est né de Dieu, ne pêche point; mais celui qui est engendré de Dieu, se conserve soi-même, et le malin [esprit] ne le touche point. Nous savons que nous sommes [nés] de Dieu; mais tout le monde est plongé dans le mal. Or nous savons que le Fils de Dieu est venu, et il nous a donné l'intelligence pour connaître le Véritable; et nous sommes dans le Véritable, [savoir], en son Fils Jésus-Christ; il est le vrai Dieu, et la vie éternelle.

Mes petits enfants, gardez-vous des idoles. Amen.

JEAN 12.12-23

Le lendemain une grande quantité de peuple qui était venu à la Fête, ayant ouï dire que Jésus venait à Jérusalem, Prirent des rameaux de palmes, et sortirent au-devant de lui, et ils criaient : Hosanna! béni soit le Roi d'Israël qui vient au Nom du Seigneur! Et Jésus ayant recouvert un ânon, s'assit dessus, suivant ce qui est écrit : Ne crains point, fille de Sion; voici, ton Roi vient, assis sur le poulain d'une ânesse. Or ses Disciples n'entendirent pas d'abord ces choses ; mais quand Jésus fut glorifié, ils se souvinrent alors que ces choses étaient écrites de lui, et qu'ils avaient fait ces choses à son égard. Et la troupe qui était avec lui, rendait témoignage qu'il avait appelé Lazare hors du sépulcre, et qu'il l'avait ressuscité des morts. C'est pourquoi aussi le peuple alla au-devant de lui; car ils avaient appris qu'il avait fait ce miracle. Sur quoi les Pharisiens dirent entre eux : ne voyez-vous pas que vous n'avancez rien? voici, le monde va après lui.

Or il y avait quelques Grecs d'entre ceux qui étaient montés pour adorer [Dieu] pendant la Fête, Lesquels vinrent à Philippe, qui était de Bethsaïda de Galilée, et le prièrent, disant : Seigneur! nous désirons de voir Jésus. Philippe vint, et le dit à André, et André et Philippe le dirent à Jésus. Et Jésus leur répondit, disant : l'heure est venue que le Fils de l'homme doit être glorifié.

ՇԱԲԹՈՒԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԸ

Աստուած մեզի փորձութիւններ կ'ուղարկէ, որպէսզի անոնք յաղթահարելով՝ ամրանանք, այլ ոչ թէ հիասթափուինք:

Մայր Թերեզա

Կարելոր չէ, թէ ով ինչ կ'ըսէ ձեր մասին. ամէն ինչ ժպիտով ընդունեցէք եւ շարունակեցէք ընել ձեր գործը:

Մայր Թերեզա

Ամէն ինչ իր ճիշդ ժամանակը ունի՝ կայ ծնելու եւ մահանալու ժամանակ, քանդելու եւ կառուցելու ժամանակ. լռելու եւ խօսելու ժամանակ:

Սողոմոն Իմաստուն

Ատելութիւնը խնդիրներ ու տարածայնութիւններ կը ստեղծէ, իսկ սերը կը ծածկէ բոլոր մեղքերը:

Սողոմոն Իմաստուն



Հոգեւոր Հովիւի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն

Սիրելի հաւատացեալներ,

Քրիստոսի Համբարձման տօնին յաջորդող Կիրակի՝ Յինանց 43-րդ օրը Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կը նշէ «Երկրորդ Ծաղկազարդ»ը: Տօնին անուանումը եկած է Չատիկի, այսինքն Սուրբ Յարութեան նախորդող տօնին անուանումէն: Ինչպէս արդէն գիտէք, Ծաղկազարդը կը խորհրդանշէ Քրիստոսի յաղթական մուտքը Երուսաղէմ, երբ մարդիկ զվյն կը դիմաւորէին փառաբանութեամբ եւ ցնծութեամբ եւ ծառերու ճիւղեր եւ մինչեւ իսկ իրենց զգեստներն ու հանդերձները փռելով Անոր առջեւ՝ ճամբուն վրայ:

Իսկ «Երկրորդ Ծաղկազարդ»ը արդէն ՀԱՄԲԱՐԶԵԱԼ Քրիստոսի ՎԵՐԻՆ Երուսաղէմ մտնելու յիշատակն է, երբ զվյն ցնծութեամբ եւ մեծ ուրախութեամբ կը դիմաւորէին հրեշտակները:

Աւանդութիւնը կը վկայէ, որ իսր Կիրապի մեջ բանտարկուած Սուրբ Գրիգոր Լուսաւորչին, ամէն օր կ'այցելէր հրեշտակը: Օր մը ան կը բացակայի: Յաջորդ օր, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ կը հարցնէ հրեշտակին՝ իր բացակայութեան պատճառը, եւ կը հասկնայ, թէ Համբարձման ժամանակ Յիսուս Քրիստոս անցեր է հրեշտակներու դասերու միջոցով: Եւ Սուրբ Լուսաւորիչին այցելող հրեշտակը՝ որ չորրորդ դասուն կը պատկանէր, եւ Համբարձման չորրորդ օրը հրեշտակներուն այդ չորրորդ դասը ամէն տարի կը տօներ Քրիստոսի երկինք համբարձուիլը: Եւ ահաւասիկ այ՛դ իսկ պատճառով բացակայած էր հրեշտակը:

Մեր Սուրբ Եկեղեցւոյ մեծ ու հմուտ աստուածաբան Սուրբ Գրիգոր Տաթեւացիի մեկնութեան համաձայն՝ բացի հրեշտակներու ամենաստորին դասէն, որոնք պ'տոյնպէս կը ծառայէին Քրիստոսի Իր երկրաւոր կեանքի ընթացքին, հրեշտակներու միւս դասերը անծանօթ էին Քրիստոսի փրկարար տնօրինութեան մասին, հրաշագործութիւններու նկատմամբ՝ մինչեւ Համբարձում:

Քրիստոսի Համբարձման ժամանակ, երբ Տէրը կ'անցներ հրեշտակներու դասերուն միջոցաւ՝ անոնց մէջէն, հրեշտակներու միւս դասերը զարմացած կը հարցնէին, թէ ո՞վ է այս «հզօր Թագաւոր»-ը: Իսկ Քրիստոսի ուղեկցող «ստորին դասի հրեշտակ»-ները անոնց մանրամասն կը բացատրէին ամէն ինչ:

Եւ ահաւասիկ հրեշտակներու այս երկխօսութիւնը Աստուածաշունչ Մատենանի մէջ Սաղմոսերգուն Դաւիթ սապէս կը նկարագրէ.

«Ո՛վ դռներ, վեր վերցուցէք ձեր գլուխները,

Ու վերցուցէ՛ք, ո՛վ յաւիտենական դռներ,

Որպէսզի փառաց Թագաւորը մտնէ:

Ո՞վ է այս փառքերու Թագաւորը,

Կարող եւ հզօր Տէրը,

Պատերազմի մէջ հզօր Տէրը:

Ո՛վ դռներ, վեր վերցուցէք ձեր գլուխները,

Ու վերցուցէ՛ք, ո՛վ յաւիտենական դռներ,

Որպէսզի փառքերու Թագաւորը մտնէ:

Ո՞վ է այս փառքերու Թագաւորը:

Չօրքերուն Տէրը.

Ի՛նքն է փառքերու Թագաւորը»:

(ՍԱՂՄ. ԻԴ 7-10):

Նոյն այս հարցումն ու պատասխանը նաեւ՝ Սուրբ Պատարագի ընթացքին կատարուող վերաբերումին մաս կը կազմէ:

«Երկրորդ Ծաղկազարդ»-ը քրիստոնէաներուն կը յիշեցնէ Քրիստոսի Համբարձումը եւ մահուընէ յետոյ՝ երկինքին մէջ, Աստուծոյ՝ Հօր ներկայութեամբ երանութիւն վայելելու յոյսը՝ որ պարգեւուած է իւրաքանչիւր հաւատացեալի:

Արդարեւ Քրիստոս, երկրի վրայ ապրած իր 33 տարիներու ընթացքին եւ յատկապէս իր կեանքի վերջին երեք տարիներուն, որոնք եղան մանաւանդ քարոզչութեան, ակտարանչութեան շրջան մը, Աստուծոյ հետ համայն մարդկութիւնը հաշտեցնելու տարիներ եղան: Այս շրջանին աստուածային սիրոյ բոլոր սահմանները բացուեցաւ մարդկութեան առջեւ՝ բժշկուեցան հիւանդներ եւ նոյնիսկ մահացածներ վերստին կեանքի կանչուեցան: Քարոզչութեան այդ շրջանին, բացի Քրիստոսի աշակերտներէն ու հետեւորդներէն, Ան կապ հաստատեց նաեւ զանազան ընտանիքներու հետ՝ ժողովուրդին մէջ, ժողովուրդին հետ եղաւ:

Եւ Յիսուս Քրիստոսի այս ժողովրդականութիւնը պատրաստեց Իր Երուսաղէմ մուտքի ժամանակ այդ մեծ ու աննախընթաց ոգեւորութիւնն ու խանդավառութիւնը, որպէս մարդ:

Իսկ Անոր Վերին Երուսաղէմ մուտքի նշանն էր իր աստուածութեան, ԱՍՏՈՒԸԾԱՅԻՆ ԲՆՈՒԹԵԱՆ:

Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան իր «Ծիսական Բառարան»ին մէջ երկրորդ Ծաղկազարդի մասին կ'ըսէ. «Երկրորդ Ծաղկազարդ ա-
նունը առած է պարզապէս օրուան անետարաններու հատուածներէն:
Հայ Եկեղեցին Նոր Կիրակիէն սկսեալ՝ չորս անետարանները կը կարդայ
ամէն օր կարգաւ, եւ այդ կարգին շարունակութեամբ չորս անետարան-
ներէն Քրիստոսի Երուսաղէմ Գալստեան հատուածները Յիւնաց 7-րդ
Կիրակիին ինկած են՝ որուն պատճառով Ծաղկազարդի յիշատակու-
թեան կրկնութիւնը տեղի կ'ունենայ: Տոհմային յիշատակ մըն ալ անել-
ցած է Նոյն օրուան վրայ. իբր զի անանդութեամբ հասած է մեզի, թէ
հրեշտակ մը ամէն օր կ'այցելէր Լուսաւորչին՝ խոր Կիրապին մէջ, այլ
Համբարձումէն յետոյ, 4-րդ օրը չէ եկած՝ Քրիստոսի Համբարձումը տօ-
նելու համար, որ այդ օրը հրեշտակը չէր ուզած իր դասին հանդէսներէն
բացակայիլ: Վկայասէր այդ յիշատակը խառնուած է նաեւ օրուան շա-
րականին»:

Արդարեւ այս տարի երկրորդ Ծաղկազարդը կը հանդիպի՝ 24 Մայիս
Կիրակի օրուան:

Եւ վերջապէս նշենք, որ այս տօները միշտ վառ կը պահեն հաւատա-
ցեալներու մտքին ու հոգիին մէջ Յիսուս Քրիստոսի ՀՐԱՇԱԳՈՐԾ
ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ՝ որ իր վախճանին կը հասնի Անոր եւս հրաշափառ
Յարութեամբը...:

Սիրելի հաւատաւոր քոյրեր եւ եղբայրներ, թող մեր Տէրն Իր
հրաշագործ եւ աստուածային բնութեամբ ներթափանցէ, յեղափոխէ,
հիմնովին Նորոգէ մեր մարդկային տկար բնութիւնը, նիւթապաշտ
միտքն ու ստորաքարշ հոգին, որպէսզի կարողանանք վեր ելլել եւ բռնել
մեր Տիրոջ՝ դէպի մեզ պարզած հայրական ձեռքը եւ քալլենք այն
տերունաւանդ ճանապարհով, որ Ամենակարողն Աստուած
պատրաստած է մեզմէ իւրաքանչիւրիս համար երկնային լուսոյ
խորաններուն մէջ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ԱՄԷՆ:

Օրհնութեամբ՝

Տէր Դաւիթ քահանայ Մարգարեան

Հոգեւոր Հովիւ



ԿԱՐԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Արդեօք Գիտեի՞ք թե.-

- **Ինչո՞ւ կաթուղիկները Ս. Հաղորդութիւն չեն տար մանուկներուն:**

Անոնք կը պնդեն, որ դեռ գիտակցութիւն չունեցող մանուկներու պարագային անհրաժեշտութիւն չկայ Ս. Հաղորդութիւն տալու, քանզի այդպիսիները արդէն իսկ կ'ապրին Աստուծոյ շնորհքին ներքոյ: Ս. Հաղորդութիւնը մեր հոգիին սնունդն է, առանց որուն չի կրնար ապրիլ քրիստոնեան: Անոր կարիքը ունին բոլորը՝ մանուկէն մինչեւ ծեր: Հետեւաբար՝ անիմաստ է զրկել մանուկներուն Ս. Հաղորդութենէն, քանզի որեւէ լուրջ պատճառ չկայ: Եթէ կ'ընդունինք մանկամկրտութիւնը, ապա Նոյն ձեւով պէտք է ընդունինք նաեւ անոնց Ս. Հաղորդութիւն տալը: Յիսուս Իր Մարմինն ու Արիւնը ճաշակելու համար տարիքային սահմանափակում չսահմանեց, ընդհակառակը՝ հաղորդեց նմանիլ միայն մանուկներուն. «**Թո՛յլ տուէք մանուկներուն եւ մի՛ արգիլէք, որ անոնք իմ մօտս գան, քանզի այդպիսիներուն է երկինքի արքայութիւնը**» (Մատթ. 19.14):

- **Հայոց Եկեղեցւոյ անդամը կրնա՞յ հաղորդուիլ այլ եկեղեցւոյ մէջ:**

Մեր Եկեղեցւոյ անդամը կրնայ հաղորդուիլ միայն Դաւանակից Եկեղեցիներու մէջ՝ Դատի, Ասորի, Եթովպիայի եւ Յնդիկ Մալանկարա Ուղղափառ Եկեղեցիներուն մէջ, որոնք մեզ նման չեն ընդունիր Քաղկեդոնի ժողովը՝ հաւատարիմ մնալով առաջին երեք՝ 325 թուականին Նիկայի Ա. 381 թուականին Կ. Պոլսոյ Բ եւ 431 թուականին Եփեսոսի Գ Տիեզերածողովներու որոշումներուն եւ սահմանումներուն: Երբ մէկը կը հաղորդուի որեւէ Եկեղեցւոյ մէջ, ան կը շեշտէ անորմով նաեւ իր այս կամ այն Եկեղեցւոյ կամ եկեղեցական ընտանիքին պատկանիլը:



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ԱՂՕԹՔ

ՅԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

Քու խաղաղութիւնովդ,
ով Քրիստոս Փրկիչ մեր,
որ մտքէ ու խելքէ շատ վեր է,
ամուր եւ անվախ պահէ զմեզ ամէն չարութենէ.
հաւասարէ զմեզ քու ճշմարիտ երկրպագուներուդ հետ,
որք հոգւով եւ ճշմարտութեամբ
քեզ երկրպագութիւն կ'ընեն.
Վասն զի Ամենասուրբ երրորդութեանդ
կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ.
այժմ եւ միշտ, յաւիտեանէ մինչեւ յաւիտեան.
Ամէն:

PRIÈRE POUR LA PAIX

Christ, notre Sauveur,
dans ta paix qui dépasse toutes pensées
et paroles,
fortifie-nous et garde-nous sans peur
devant tout mal;
mets-nous auran de tes vrais adorateurs,
qui t'adorent en esprit et en vérité,
car à la très Sainte Trinité
conviennent la gloire, la souveraineté et l'honneur,
maintenant et toujours et pour l'éternité de l'éternité.
Béni soit notre Seigneur, Jésus-Christ.
Amen.

ՆՈՒԲԱՏՈՒՄԻՒՆ ԵԿԵՂԵՅԻՅՑ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

**Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal, QC
Donations of May have been received with great appreciation
2020**

CHURCH:

SUNDAY SCHOOL:

Mr. & Mrs. Haik Yasa \$600.

RENOVATION FUND:

Mrs. Silva Karaoghlanian \$320, Mr. & Mrs. Aret Tasciyan \$100.

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE MARIE KALEMKERIAN:

Mr. & Mrs. Onnik & Marie Pilafian \$100.

THE LATE SYLVA MEKHGEAVAKIAN:

Mrs. Sylva Ferah \$50.

THE LATE SIRARPI DINGOYAN-KAZAN:

Mr. & Mrs. Nazaret Sahakian, Mr. & Mrs. Migirdic & Silva Arslan,
Mr. & Mrs. Hagop & Anoosh Kazan \$200, Mr. & Mrs. Varoujan &
Anoosh Asadur & their child \$130, Mr. & Mrs. Umer Ismail & Taline
Sahakian, Mr. & Mrs. Migirdic Sahakian, Mr. & Mrs. Harutun &
Tanya Harutunian, Miss Sona Arslan, Mr. & Mrs. Hayko & Katia
Kazan, Mr. & Mrs. Alain & Cynthia Sahakian, Miss Caroline Kazan,
Mr. Levon Senoglu, Mr. & Mrs. Raffi & Caroline Balabanian \$100,
Mr. Richard Turcotte, Mr. & Mrs. Minas & Verjine Asaduryan \$60,
Mrs. Najda Menendyan, Mr. & Mrs. Avedis & Ani Kayzak,
Mr. & Mrs. Garbis & Ayda Kayzak, Mr. & Mrs. Norayr Gurnagul,
Mr. & Mrs. Levon & Diana Seferyan,
Mr. & Mrs. Vahakn & Lucy Arapyan,
Mr. & Mrs. Berc Kirmiziyan, Mrs. Arpi Cihanoglu,
Mr. & Mrs. Gilbert & Reena Migirditsian \$50.

THE LATE GARBIS FERAH:

Miss Irma & Mr. Manuk Elmokyan \$400, Mrs. Sylva Ferah \$300,
Mrs. Armine Erol, Shahverdian Family \$200, Mekhgeavakian
Family \$150, Mr. Carlo Gurunlyan & Dr. Vilma Derbekyan, Mr. Ara

Roun, Mr. Levon Senoglu, Mr. & Mrs. Shahan Gazeryan \$100, Mr. & Mrs. Minas & Verjine Asaduryan \$60, Mrs. Germaine Koleoglu, Mr. & Mrs. Migirdic Didonyan, Mr. & Mrs. Hagop & Anoosh Kazan, Mr. & Mrs. Ara & Marie Gerikyan, Mr. & Mrs. Martin Marasliyan, Mr. & Mrs. Roupén & Meline Arsever, Mr. & Mrs. Avedis & Marie Basmacioglu, Mrs. Pekruhi Merhemetci, Mr. & Mrs. Hazar & Hasmig Met, Mr. & Mrs. Dikran & Rima Derderyan, Mr. & Mrs. Berc & Emma Essen, Mr. & Mrs. Krikor & Rosa Dikranian, Mr. & Mrs. Jirayr & Anahid Dolar, Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian \$50, Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan, Mrs. Seta Artokun \$40.

THE LATE HAROUTYOUN BALIAN:

Mr. & Mrs. Krikor & Rosa Dikranian \$50.

**HOKEHANKISD (REQUIEM SERVICES)
IN MEMORY OF:**

THE LATE VAHE KETLI:

Mrs. Karmen Ketli \$50.

THE LATE VAROUJ DEMIRDJIAN:

Mr. & Mrs. Krikor & Sylvia Demirdjian \$100.

THE LATE AGOP BEL :

Mrs. Hera Bel \$250, Mrs. Hilda Bel \$200,
Mr. Varoujan Artokun \$100.

THE LATE ZAVEN TCHAYLAKIAN:

Mrs. Alice Djinguezian-Tchaylakian \$200.

THE LATE PAULINA ZAKARIAN:

Mrs. Sylva Zakarian \$100.

THE LATE MARIE MATOSSIAN:

Mr. & Mrs. Garo & Michelle Boghosian \$100.

**THE LATE SYLVA & VAHAN MEKHGEAVAKIAN
& GRANDPARENTS:**

Mekhgeavakian Family \$250, Mrs. Anahid Arabaghian & Family \$100.

YOUGHAKIN EASTER:

Mrs. Sylva Ferah \$50, Mr. & Mrs. Apraham & Dzovig Khshvajian,
Mr. & Mrs. Antranig & Araz Dervishian, Mrs. Shake Makalian \$20.

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 24 Մայիս 2019



Տ. Է. Տիկ. Նազարեթ Մըխճաւաքեանի եւ զաւակներուն,
Օրդ. Հերմին Մըխճաւաքեանի,
Պրն. Մազո Մըխճաւաքեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի

իրենց սիրեցեալ ծնողաց՝
ՍԻԼՎԱ ՄԸԽՃԱԻԱՔԵԱՆԻ
(SYLVA MEKHGEAVAKIAN)

Մահուան 40-ին առիթով:
ՎԱՀԱՆ ՄԸԽՃԱԻԱՔԵԱՆԻ
(VAHAN MEKHGEAVAKIAN)

Մահուան առաջին տարելիցին առիթով:

Ինչպէս նաեւ՝

Իրենց մեծ ծնողաց՝
ՆԱԶԱՐԷԹ ԵՒ ՄԱՏԼԷՆ
ՄԸԽՃԱԻԱՔԵԱՆՆԵՐՈՒ

(NAZARETH & MADELEINE MEKHGEAVAKIAN)

ԲԱՐՍԵՂ ԵՒ ՀԵՐՄԻՆԷ

ԳԱՀՐԱՍԱՆՆԵՐՈՒ

(PARSEGH & HERMINE KAHRAMAN)

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԸԽՃԱԻԱՔԵԱՆԻ
(HAYGANUSH MEKHGEAVAKIAN)

ՄԿԻՐԻՉ ՉԱՄԻՉԵԱՆԻ
(MIGIRDITCH CHAMICHIAN)

ԱՐԱԳՍԻ ԲԱԼՍԵԱՆԻ

ԵՒ

ՖԻԼՕՐ ՔԻԻՐՔԸՆԵԱՆԻ

(ARAXI PALAYAN & FILOR KURKDJIAN)

Հոգիներուն ի հանգիստ

ՏՕՆԵՐ

Կիրակի , 24 Մայիս 2020



Երկրորդ Ծաղկազարդ

Քրիստոսի Համբարձման տօնին Յաջորդ Կիրակի օրը Հայ Առաքելական եկեղեցին կը նշէ Երկրորդ Ծաղկազարդը: Տօնին անուանումը յառաջացած է Ս. Յարութեան Նախորդող Ծաղկազարդի տօնին անուանումէն: Վերջինս կը խորհրդանշէ Քրիստոսի յաղթական մուտքը Երուսաղէմ, երբ մարդիկ Տիրոջը կը դիմաւորէին փառաբանութեամբ ու ցնծութեամբ եւ արմաւենիի ճիւղեր կը սփռէին Անոր առջեւ:

Երկրորդ Ծաղկազարդը արդէն համբարձած Քրիստոսի՝ Վերին Երուսաղէմ մտնելու յիշատակն է, երբ Անոր ցնծութեամբ կը դիմաւորէին հրեշտակները: Աւանդութեան համաձայն՝ հրեշտակ մը ամէն օր կ'այցելէր վիրապին մէջ բանտարկուած Ս. Գրիգոր Լուսաւորիչին: Օր մը ան կը բացակայի: Յաջորդ օրը Ս. Գրիգորը, հարցնելով պատճառը, կ'իմանայ, որ Համբարձման ժամանակ Յիսուս Քրիստոս կ'անցնի հրեշտակներու ինը դասերու միջոցով. ամէն տարի հրեշտակները կը տօնախմբէին Տիրոջ Համբարձումը երկինք: Լուսաւորիչին այցելող հրեշտակը չորրորդ դասէն էր, եւ Համբարձման չորրորդ օրը հրեշտակներու այդ դասին տօնախմբութեան հերթն էր:

Համբարձման յաջորդող ինը օրերուն Քրիստոս հրեշտակներու ինը դասերուն մէջ գտնուեցաւ եւ իւրաքանչիւր դասին մէջ մէկ օր հանգստացաւ: Այդ օրերուն իւրաքանչիւր դաս ցնծութեամբ եւ ուրախութեամբ ընդառաջ կ'ելլէր Տիրոջ առջեւ ու Անոր պատուին տօն կը կատարէր, եւ Տէրը անոնց կը հաստատէր ու կը յայտնէր Իր մարդեղութեան խորհուրդը: Իսկ չորրորդ օրը չորրորդ դասին մէջ հանգստացաւ եւ այդ պատճառով ամէն տարի այդ օրը այդ դասը տօն կը կատարէ:

Այս առիթով Գրիգոր Վկայաւեր կաթողիկոսի գրած «Մեծահրաշ յայս խորհուրդ» շարականին մէջ հանգամանօրէն կը պատմուի ամբողջ աւանդութիւնը:

Ինչպէս յարութենէն յետոյ Քրիստոս մնաց օդին մէջ քառասուն օր, որպէսզի մարդոց մէջ հաստատէ Իր յարութեան հաւատքը, այդպէս ալ համբարձումէն յետոյ իննը օր մնաց հրեշտակներու դասերուն մէջ, որպէսզի անոնց յայտնէ մարդոց փրկութեան խորհուրդը:

Այսպէսով, եթէ բուն Ծաղկազարդը կը խորհրդանշէ Յիսուսի արքայական մուտքը Երուսաղէմ, ապա Երկրորդ Ծաղկազարդը կը

խորհրդանշէ Յիսուսի փառաւոր մուտքը ի Վերին՝ Երկնային Երուսաղէմ, հրեշտակներու ուղեկցութեամբ:

Holidays

Second Palm Sunday

On the Sunday following the Feast of the Ascension of Our Lord, the Armenian Church celebrates “Second” Palm Sunday. The name of the feast has been derived from Palm



Sunday, which precedes Easter. In the week leading up to His betrayal, crucifixion and resurrection, the “first” Palm Sunday symbolized the triumphant entry of Christ into Jerusalem where people met Him with great joy and glorified His Holy Name. The Second Palm Sunday is the commemoration of the triumphant entry of the Ascended Christ into the Heavenly Jerusalem, where the angels meet him with great happiness and delight.

According to tradition, during St. Gregory the Illuminator’s imprisonment in the pit, he was visited every day by the same angel. However, one day, the angel did not come. The following morning, St. Gregory inquires to the reason for his absence, to which the angel responds that during the Ascension, Christ had passed through the ranks of the Angels, and they celebrate that feast each year. The angel visiting St. Gregory was from the fourth class of angelic hosts, and thus, on the fourth day following the Ascension, his rank of angels commemorates and celebrates Christ’s Ascension to heaven every year.

St. Gregory of Datev, one of the greatest theologians of the Armenian Church, has a famous interpretation of this event. Prior to His Ascension, the ranks of angels, except for the lowest class, who served Christ during His earthly life, were not aware of Christ’s incarnation for the salvation of man. St. Gregory’s commentary states that when the Lord was passing through the ranks of angels, they were surprised and asked, “Who was that powerful king?” The angels accompanying Christ thus informed them. This dialogue of angels is presented in the Holy Bible, in the book of Psalms:

“Lift up your heads, O ye gates; and be ye lifted up, ye everlasting doors;

and the King of glory shall come in.”

“Who is this King of glory? The LORD strong and mighty, the LORD mighty in battle.”

“Lift up your heads, O ye gates; even lift them up, ye everlasting doors;

and the King of glory shall come in.”

“Who is this King of glory?”

“The LORD of hosts, he is the King of glory.”

(Psalms 24:7-10).

The angelic dialogue is exhibited for us, when it is heard during the Divine Liturgy, as the deacon approaches the celebrant priest with the chalice during the Great Entrance (Verapehroom).

Second Palm Sunday is one more reminder of the Ascension of Christ and grants us the hope for ascending to heaven after our deaths, and being in the bliss of God’s presence.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒԱՆ

Մայիս – Mai

25, Երկուշաբթի – ԽԴ ՕՐ ՅԻՆԱՆՑ

Lundi 25 – 44ème jour

26, Երեքշաբթի – ԽԵ ՕՐ ՅԻՆԱՆՑ

Mardi 26 – 45ème jour

27, Չորեքշաբթի – ԽԶ ՕՐ ՅԻՆԱՆՑ

Mercredi 27 - 46ème jour

28, Հինգշաբթի – ԽԷ ՕՐ ՅԻՆԱՆՑ

Jeudi 28 – 47ème jour

29, Ուրբաթ – ԽԸ ՕՐ ՅԻՆԱՆՑ

Vendredi 29 – 48ème jour

30, Շաբաթ- ԽԹ ՕՐ ՅԻՆԱՆՑ

Samedi 30 – 49ème jour

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճար
St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal
Ս. ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՅԱՆԳԻՍ
LA SAINTE MESS ET L'OFFICE DE REQUIEME
Կիրակի, 24 Մայիս 2020
Dimanche, le 24 Mai 2020

Ուղիղ հեռարձակում - Live



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Պատարագ առաւօտեան ժամը 10:30-ին

La Sainte Messe à 10:30

Հոգեհանգստեան Պաշտօն կէսօրին /Office de Requieme à Midi

Թէեւ ներկայ իրավիճակը անորոշութեամբ կը շարունակուի, սակայն մեր Եկեղեցւոյ Ս. Եւ Անմահ Պատարագը, հոգեհանգստեան պաշտօններն ու աղօթքները առցանց կ'երպով կը շարունակուին մատուցուիլ:

Անոնք, որոնք կը փափաքին դիմել հոգեհանգստեան պաշտօններու, աղօթքի խնդրանքներու իրենց հարազատներու ապաքինման համար, կրնան հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066 թիւին, մենք սիրով կ'ընդառաջենք Ձեր խնդրանքներուն միաժամանակ հաղորդակից դարձնելով Ձեզի Մեր սրբազան արարողութիւններուն:

Bien que la situation actuelle reste incertaine, la liturgie de la Sainte et Immortelle, les services de requiem et les prières continuent d'être offerts en ligne. Ceux qui souhaitent demander un service de requiem et des prières pour le rétablissement de leurs proches, veuillez appeler le Bureau de l'Église au (514)279-3066), nous serons heureux de répondre à vos demandes et de vous faire participer à nos rites sacrés.

Nous acceptons également vos dons en ligne par:





Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր
Տաճար

St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

Երեկոյեան Ժամերգութիւն եւ
Բժշկութեան Աղօթք - Առցանց
SERVICE DU SOIR ET PRIÈRE DE GUÉRISON
Diffusion en direct



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Երեկոյեան Ժամերգութիւն եւ
Բժշկութեան Աղօթք
Մայիս եւ Յունիս ամիսներուն համար
Ամէն Չորեքշաբթի երեկոյեան ժամը՝ 5:00-ին:
«Ամէն ինչ որ կը խնդրէք աղօթքի մեջ՝ հաւատքով,
պիտի ստանաք» (Մտ. 21:22):

SERVICE DU SOIR ET
PRIÈRE DE GUÉRISON
AUX MOIS DE MAI ET JUIN

Veillez-vous joindre par la page de Facebook.
Tous les mercredis soir à 17h:00

«Tout ce que vous demanderez dans la prière avec foi,
vous le recevrez» (Mathieu 21:22).

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008

stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal




**Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր Տաճար**
**St. Gregory the Illuminator Armenian Cathedral
of Montreal**

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
Ուղիղ հեռարձակում



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Ս. Գիրքի Սերտողութիւն Առցանց
Մայիս եւ Յունիս ամիսներուն**

Արժ. Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեանին հետ
ամէն Յինգշաբթի երեկոյեան ժամը՝ 5-ին:

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները
աղօթակից դառնալու եւ հաղորդուելու
փոխանցուելիք աստուածաշնչական գիտելիքներուն:

Սերտողութիւններուն հետեւիլ
Եկեղեցւոյ դիմատետրին միջոցաւ:

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Cathédrale Arménienne Saint-Grégoire
l'Illuminateur de Montréal**

Études Bibliques

Diffusion en direct



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Études Bibliques
Aux mois de Mai et Juin**

Rév. Père David Margaryan, Prêtre Paroissial
Tous les jeudis à 17h:00

Nous invitons nos chers fideles
à prier et à communiquer
avec les connaissances bibliques.

Veillez suivre les programmes à travers la page
Facebook de l'Église.

615 Avenue Stuart, Outremont, Québec H2V 3H2 / Tél.: (514) 279-3066/
Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ԿԻՐԱԿԱՄՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ուղիղ հեռարձակում – En direct



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Շաբաթ, 30 Մայիս 2020

Ժամերգութիւն - երեկոյեան ժամը՝ 5-ին:

Samedi, le 30 Mai 2020

Office du soir à 17h00.